ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 28

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով Վարդան Հարությունի Ամիրխանյանի դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմից գծված նախագծի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Ի լրումն Պտղնի համայնքի ղեկավարի 2016 թվականի մայիսի 10-ի N 23 որոշման Վարդան Հարությունի Ամիրխանյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգետարածք 13-րդ թաղամաս թիվ 27 հասցեում գտնվող 0.0615 հա բնակավայրերի նշանակության այգեգործական հողամասի (սեփականության վկայական N 1248210, ծածկագիր 07-054-0147-0011) վրա այգետնակի վերակառուցման աշխատանքների շինարարության թույլտվություն:
2. Հանձնարարել Վարդան Հարությունի Ամիրխանյանին շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:
3. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
4. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ եռօրյա ժամկետում գյուղապետարան ներկայացնել տեղեկանք Ձև N 5-ը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2018 թ. Մայիսի 04
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 29

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆՈՐՄԱՏԻՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի պահանջների՝ ***որոշում եմ.***

1. Պտղնի համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 15-ի N 2-Ն և 3-Ն, փետրվարի 07-ի N 6-Ն, փետրվարի 12-ի N 9-Ն, մարտի 14-ի N 12-Ն և ապրիլի 12-ի N 15-Ն որոշումները պաշտոնական հրապարակել 2018 թվականի մայիսի 5-ին:
2. Պաշտոնական հրապարակումն իրականացնել համայնքի տարբեր հատվածներում ցուցատախտակներին փակցնելու միջոցով:
3. Պաշտոնական հրապարակման պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղարի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2018 թ. Մայիսի 04
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 30

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ Գ. ՊՏՂՆԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԶԱՐԶԱՆԴ ԻԼՅԱՅԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ /ԾԱԾԿԱԳԻՐ 07-054-0037-0003/ 0.02073 ՀԱ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ 1989 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՊԱՐԻՍՊԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Զարզանդ Իլյայի Պողոսյանը դիմել է Պտղնիի համայնքապետարան Կոտայքի մարզ գ. Պտղնի 2-րդ փողոց թիվ 8 հասցեում գտնվող 1989 թվականին կառուցված բնակելի շինությունների, պարիսպի և 0.02073 հա /ծածկագիր 07-054-0037-0003/ տնամերձ հողամասի նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով, քանի որ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը և (կամ) հողհատկացման հիմքերը:

Համաձայն «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջների, հիմք ընդունելով Զարզանդ Իլյայի Պողոսյանի դիմումը և որակավորված անձի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Զարզանդ Իլյայի Պողոսյանին պատկանող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, հողամասը և շինությունները կառուցված չեն և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Զարզանդ Իլյայի Պողոսյանի /ծնված 15.02.1963թ./ սեփականության իրավունքը, գ. Պտղնի 2-րդ փողոց թիվ 8 հասցեում գտնվող 07-054-0037-0003

կադաստրային ծածկագրով 0.02073 հա փաստացի օգտագործվող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի և այդ հողամասի վրա 1989 թվականին կառուցված ըստ նպատակային նշանակության բնակելի շինությունների ըստ գործառնական նշանակության՝ 57.6 քմ արտաքին մակերեսով ավտոտնակի, 25.5 քմ արտաքին մակերեսով անասնաշենքի, 83.1 քմ արտաքին մակերեսով ձեղնահարկի, 7.6 քմ մակերեսով աստիճանավանդակի և 5.24 քմ մակերեսով պարիսպի նկատմամբ, որոնք նրա կողմից փաստացի օգտագործվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Զարզանդ Իլյայի Պողոսյանի սեփականության իրավունքը հողամասի և բնակելի շինությունների նկատմամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2018 թ. Մայիսի 04
գ.Պտղնի